

ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ



«Փըրֆեքթ Աուդիտ» ՍՊԸ

ՀՀ, ք.Երևան 0010

Տիգրան Մեծի 4

Հեռ. +374 10 524 724

ԱՆԿԱԽ ԱՌԻԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Գյումրի համայնքի ղեկավարին և ավագանուն

Եզրակացություն բյուջեի կատարման տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտի վերաբերյալ

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել Գյումրի համայնքի (այսուհետ՝ «Համայնք») կից ներկայացվող հատուկ նպատակի հիմունքների համաձայն պատրաստված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ բյուջեի կատարման եկամուտների և ծախսերի հաշվետվությունները:

Մեր կարծիքով, կից բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը բոլոր էական առումներով ճշմարիտ է ներկայացնում տարեկան բյուջեի կատարման եկամուտների և ծախսերի մասին 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ իրական պատկերը՝ համաձայն «Հատուկ նկատառումներ – հատուկ նպատակի հիմունքների համաձայն պատրաստված ֆինանսական հաշվետվությունների աուդիտ» (ԱՄՍ 800) ստանդարտի:

Կարծիքի հիմք

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում:

Մենք անկախ ենք համայնքապետարանից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝

համաձայն ՀՄԷՍԽ կանոնների: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է «Բյուջետային համակարգի մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքների, ոլորտը կարգավորող իրավական ակտերի պահանջներին համապատասխան, ինչպես նաև համայնքների բյուջեի կազմման հրահանգին համապատասխան տարեկան հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է համայնքապետարանի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի համայնքը լուծարելու կամ գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են համայնքի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազմեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն:

Ի լրումն՝

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր այդ ռիսկերին արձագանքելու նպատակով և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում:

- Ձեռք ենք բերում աուդիտին առնչվող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու և ոչ թե Համայնքապետարանի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների խելամտությունը և կից բացահայտումների բավարարությունը:

- Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք

բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք, թե արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած հարուցել Համայնքապետարանի անընդհատ գործելու կարողության նկատմամբ: Եթե եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա:

Սակայն ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Համայնքապետարանին դադարեցնել գործունեության անընդհատության հիմունքի կիրառումը:

- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

05 մարտ, 2026թ.

Հարգանքով,
«Փըրֆեքթ Աուդիտ» ՍՊԸ
տնօրեն-բաժնետեր, ի.գ.թ.



Աղավնի Բաբայան

Գյումրու համայնքապետարանի 2025 թվականի բյուջեի կատարման ամփոփ աղյուսակ
 եկամուտների գծով:

հազար դրամ

	ՀՀ հողվածների անվանումը	տարեկան հաստատված պլան	տարեկան ճշտված պլան	փաստացի	շեղումը գումարով		Կատար- ղականի %
					/+/ /-/	/-/ /+/	
	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ	7,858,944,667	7,858,944,667	6,595,823,883	(1,263,120,784)		83.9%
1100	ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ	1,820,882,567	1,820,882,567	1,656,259,464	(164,623,103)		91.0%
1110	Գույքային հարկեր անշարժ գույքից	532,704,585	532,704,585	463,883,839	(68,820,746)		87.1%
1120	Գույքային հարկեր այլ գույքից	1,100,071,982	1,100,071,982	977,364,597	(122,707,385)		88.8%
1130	Տեղական տուրքեր	133,106,000	133,106,000	158,339,607	25,233,607		119.0%
1140	Համայնքային բյուջե վճարվող պետական տուրքեր	55,000,000	55,000,000	56,671,420	1,671,420		103.0%
1200	ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ	5,177,400,300	5,177,400,300	4,038,153,490	(1,139,246,810)		78.0%
1250	Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից	4,015,490,400	4,015,490,400	4,015,490,000	(400)		100.0%
1260	Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից	1,161,909,900	1,161,909,900	22,663,490	(1,139,246,410)		*2.0%
1300	ԱՅԼ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ	860,661,800	860,661,800	901,410,929	40,749,129		104.7%
1330	Գույքի վարձակալությունից եկամուտներ	156,441,100	156,441,100	162,233,259	5,792,159		103.7%
1340	Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից, (տող 1341 + տող 1342 + տող 1343), այդ թվում՝			(528,000)	(528,000)		#DIV/0!
1350	Վարչական գանձումներ	558,287,000	558,287,000	610,359,711	52,072,711		109.3%

1360	Մուտքեր տույժերից, տուգանքներից	1,600,000	1,600,000	4,410,764	2,810,764		275.7%
1370	Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ	5,000,000	5,000,000	17,072,946	12,072,946		341.5%
1380	Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ			(6,253,554)	(6,253,554)		#DIV/0!
1390	Այլ եկամուտներ	139,333,700	139,333,700	114,115,803	(25,217,897)		81.9%

Գյումրի համայնքի 2025 թվականի բյուջեն եկամուտների գծով կատարվել է 83,9%-ով, բյուջեով նախատեսված 7,858,944,667.0 դրամի դիմաց, փաստացի մուտքերը կազմել են 6,595,823,883.0 դրամ:

Տեղական տուրքեր հողվածի գերակատարումը առաջացել է համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների շինարարության թույլտվությունների տրամադրման արդյունքում:

*Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից՝ պետական բյուջեից սուբվենցիոն ծրագրերի իրականացման համար պլանավորվել էր 1 161 909 900 դրամ, իսկ փաստացի ֆինանսավորվել է 22 663 490 դրամ: Քանի որ 2025 թվականին շինարարական աշխատանքներ չեն ընթացել, սուբվենցիոն ծրագիրը տեղափոխվել է 2026 թվական:

Գյումրու համայնքապետարանի 2025 թվականի բյուջեի կատարման ամփոփ աղյուսակ գործառնական ծախսերի գծով:

հազար ՀՀ դրամ

	ՀՀ հողվածների անվանումները	Տարեկան հաստատված պլան	Տարեկան ճշտված պլան	Փաստացի	Շեղումը գումարով		Կատարողական %
					/+/ /-/		
	ԸՆԴԱՄԵՆԸ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ	9,193,112,167	9,193,112,167	6,605,842,280		(2,587,269,889)	71.9%
2100	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	1,269,790,300	1,225,290,300	1,025,529,566		(199,760,734)	83.7%
2200	ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	2,400,000	2,400,000			(2,400,000)	
2400	ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	2,666,151,500	2,747,651,500	1,323,348,230		(1,424,303,270)	*48.2%
2500	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	1,090,415,500	1,106,415,500	912,823,100		(193,592,400)	82.5%

2600	ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ	1,261,777,967	1,271,277,967	754,735,367	(516,542,600)	*59.4%
2800	ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ	1,769,666,100	1,777,166,100	1,638,327,610	(138,838,490)	92.2%
2900	ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	1,062,604,800	1,012,604,800	940,582,808	(72,021,992)	92.9%
3000	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	70,306,000	50,306,000	10,495,597	(39,810,403)	*20.9%
3100	ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍԿՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ	925,893,000	925,893,000		(925,893,000)	1%

*Շինարարական աշխատանքները չեն կատարվել և տեղափոխվել են 2026 թվական: 1%

Գյումրի համայնքի 2025 թվականի բյուջեն ծախսերի գծով կատարվել է 71,9%-ով, 1%

նախատեսված 9,193,112,167 դրամի դիմաց կատարողականը կազմել է 6,605,842,280 99%

դրամ:

Ծախսերը եկամուտների նկատմամբ կազմել են մոտ 100%: